ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մարտի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 3-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **02.03.2023թ-ի «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի սեփական դիմումի համաձայն՝ «Ուրարտու-աղջիկներ 2» թիմի՝ կանանց առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունից հրաժարումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000-ի ՀՀ դրամի չափով, հեռացնել «Ուրարտու-աղջիկներ 2» թիմին առաջնությունից և զրկել տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից:

2. **07.03.2023թ-ի «Արփա ՄԱ»-ի սեփական դիմումի համաձայն՝ «Արփա-08» թիմի՝ մանկապատանեկան առաջնության հետագա մասնակցությունից հրաժարումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արփա ՄԱ»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Արփա ՄԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և հեռացնել «Արփա-08» թիմին առաջնությունից՝ սահմանելով հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:

3. **09.03.2023թ.-ի «Սարդարապատ-10»-«Փյունիկ-3-10» (13Մ4-039) խաղի ժամանակահատվածում «Փյունիկ-3-10» թիմի մարզիչ Արսեն Բեժանյանի (6312) կողմից ոչ մարզական պահվածք թույլ տալը և դաշտի տեր թիմի կողմից մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը, ինչը հանգեցրել է «Փյունիկ-3-10» թիմի երկրպագուների կողմից մրցավարների նկատմամբ անհարգալից արարքներ թույլ տալուն**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել դաշտի տեր «Սարդարապատ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Փյունիկ-3-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 23-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի 15,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Փյունիկ-3-10» թիմի մարզիչ Արսեն Բեժանյանի (6312) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 272-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 1 խաղով և որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: <u>Որակազրկումը տարածվում է 09.03.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:</u>

4. **09.03.2023թ.-ի «Թիմ Ագրո»-«Թիմ ՖԱՖ» (ՖՁԲԽ-041) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Արարատի Արաքս ՖԱ»-ի ներկայացուցչի չմասնակցելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Թիմ ՖԱՖ»-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «Արարատի Արաքս ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

5. **11.03.2023թ.-ի «Արարատի Արաքս»-«Աջափնյակ-Երևան» (ՍՖԱ-013) խաղի ժամանակահատվածում «Արարատ Արաքս ՖԱ»-ի ֆուտբոլիստ Արտեմիյ Լովչեվի (48617) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի նկատմամբ բռնարարք թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատի Արաքս ՖԱ»-ի ֆուտբոլիստ Արտեմիյ Լովչեվի (48617) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 51-րդ հոդվածի 11-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Արարատի Արաքս ՖԱ»-իմ տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 11.03.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

6. **11.03.2023թ.-ի «Արարատի Արաքս»-«Աջափնյակ-Երևան» (ՍՖԱ-013) խաղի ժամանակահատվածում «Աջափնյակ-Երևան»-ի ֆուտբոլիստ Ժոզեֆ Շանելյանի (3783) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի նկատմամբ բռնարարք թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատի Արաքս ՖԱ»-ի ֆուտբոլիստ Ժոզեֆ Շանելյանի (48617) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 51-րդ հոդվածի 11-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Աջափնյակ-Երևան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 11.03.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

7. **11.03.2023թ.-ի «Արարատի Արաքս»-«Աջափնյակ-Երևան» (ՍՖԱ-013) խաղի ժամանակահատվածում «Աջափնյակ-Երևան»-ի ֆուտբոլիստ Տիգրան Ոսկանյանի (1906) կողմից պաշտոնատար անձի հասցեին հայհոյանքներ թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատի Արաքս ՖԱ»-ի ֆուտբոլիստ Տիգրան Ոսկանյանի (1906) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 51-րդ հոդվածի 13-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Աջափնյակ-Երևան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 11.03.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

8. **12.03.2023թ.-ի «Արարատ Արմենիա»-«Շիրակ» (ՊԼ-115) խաղի ժամանակահատվածում «Շիրակ»-ի ֆուտբոլիստ Արտյոմ Միքայելյանի (8768) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի նկատմամբ բռնարարք թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ակումբի ֆուտբոլիստ Արտյոմ Միքայելյանի (8768) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով

Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։ Որակազրկումը տարածվում է 12.03.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում։